ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 17-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՎԱՐԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով այն, որ ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, ուստի դրանում առկա հնարավոր թերությունները հայտնաբերելու և շտկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների տարածքային բաժինների և բաժանմունքների պետերին՝

1) 2021 թվականի մայիսի 12-ին անձնագրային ծառայություններից ստանալ տվյալ անձնագրային ծառայության կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները,

2) ենթակա ստորաբաժանումների ծառայողներին հանձնարարել մինչև սույն թվականի հունիսի 10-ը կատարել այցելություններ հասցեներ՝ ցուցակներում առկա հնարավոր անճշտությունները հայտնաբերելու նպատակով,

3) ցուցակներում առկա անձի մահվան վերաբերյալ տեղեկություններ ի հայտ գալու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ մահվան փաստը հավաստող փաստական տվյալներ ձեռք բերելու նպատակով (մահվան վկայական, մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռ, մահվան ակտի գրառում և այլն),

4) մահվան փաստը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ մահվան վերաբերյալ լրացուցիչ այլ փաստական տվյալներ ձեռք բերելու համար (մահացած անձի հարազատի, անհնարինության դեպքում հարևանությամբ բնակվող առնվազն երկու անձի գրավոր բացատրություն, տեղեկանք՝ տրված վարչական շրջանի ղեկավարի կողմից, համատիրությունից և այլն),

5) տվյալ հասցեում բնակվող անձի անձնագրում և ցուցակում հաշվառման վերաբերյալ անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում կազմել արձանագրություններ՝ դրանց կցելով անձնագրի պատճենը (պատճենը վերցնելու անհնարինության դեպքում տեղում կատարել անձնագրի լուսանկարահանում),

6) ցուցակներում առկա անճշտություններ հայտնաբերելիս ամենօրյա ռեժիմով դրանք տրամադրել տարածքային անձնագրային ծառայությունների ղեկավարներին (կազմված արձանագրություններով, զեկուցագրերով, ձեռք բերված բոլոր փաստաթղթերով) և ոչ ուշ, քան սույն թվականի հունիսի 10-ը ամփոփել կատարված աշխատանքները՝ տվյալ օրվա ավարտին հետ վերադարձնելով նաև անձնագրային ծառայություններից ստացած ցուցակները:

2. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային անձնագրային ծառայությունների ղեկավարներին՝

1) 2021 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների տարածքային բաժիններին և բաժանմունքներին տրամադրել տվյալ անձնագրային ծառայության կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները,

2) մահվան վկայականների կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված մահվան փաստը հավաստող այլ փաստաթղթի առկայության դեպքում մահացած անձին հանել հաշվառումից,

3) անձնագրում և ցուցակներում հաշվառվման վերաբերյալ տվյալների անհամապատասխանության առկայության դեպքում քննարկման առարկա դարձնել հասցեի ճշգրտման խնդիրը՝ բավարար հիմքերի առկայության դեպքում կատարելով համապատասխան ուղղումներ,

4) այն դեպքերում, երբ մահվան վերաբերյալ տեղեկությունները հիմնավորված չեն լինի մահվան վկայականով կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված այլ փաստաթղթերով, ստացված տեղեկատվությունը 1-օրյա ժամկետում զեկուցագրով ներկայացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

3. Սույն հրամանի 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների պետերին, իսկ 2-րդ կետի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Մկրտչյանին:

ԳՆԴԱՊԵՏ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«11» 05 2021թ.

ք. Երևան